

ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Գևորգ Պողոսյան

ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավաբանական անձինք կարող են լինել իրենց գործունեությամբ շահույթ ստանալու նպատակ հետապնդող (առևտրային) կամ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխող (ոչ առևտրային) կազմակերպություններ: Վերջիններիս գործունեությունը կարգավորող իրավական ակտերի ամբողջության մեջ ներկայացված իրավանորմը թերևս միակն է, որ այս կամ այն կերպ սահմանում է ոչ առևտրային կազմակերպության հասկացությունը: Ուրտը կարգավորող այլ իրավական ակտերը, որոնք արդեն վերաբերում են առանձին տեսակի ոչ առևտրային կազմակերպությունների կողմից իրականացվող գործունեությանը, չեն անդրադառնում դրանց հասկացությանը: Այս կամ այն չափով միակ բացառություն կարելի է համարել «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքը¹, որի 3-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է. «Հիմնադրամ է համարվում քաղաքացիների և (կամ) իրավաբանական անձանց կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպությունը, որը հետապնդում է սոցիալական, բարեգործական, մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, բնապահպանական և (կամ) այլ հանրօգուտ նպատակներ»: Ներկայացված հասկացությունը, սակայն, չի կարելի համարել ընդհանուր և տարածել մյուս տեսակի ոչ առևտրային իրավաբանական անձանց վրա, ուստի կարելի է պնդել, որ ՀՀ գործող քաղաքացիական օրենսդրությունը ոչ առևտրային կազմակերպությունների հասկացության հարցում առաջնորդվում է բացառման սկզբունքի կիրառմամբ, այն է՝ ոչ առևտրային են այն կազմակերպությունները, որոնք առևտրային չեն:

Վերոգրյալի հիման վրա հնարավոր է եզրակացնել, որ եթե որևէ ինստիտուտի վերաբերյալ առկա չէ միանշանակ և հստակ պատկերացում, ակնհայտ է, որ համապատասխան ինստիտուտն օրենսդրորեն հնարավոր չի լինելու միանշանակ և ամբողջապես կարգավորել, ինչի արդյունքում ինստիտուտի կիրառման ողջ ընթացքում կարող են ի հայտ գալ այնպիսի իրավական և փաստական խնդիրներ, որոնց լուծումը հնարավոր չի լինի տալ՝ հաշվի առնելով օրենսդրական բացը կամ կարգավորման անարդյունավետությունը, իսկ որոշ դեպքերում՝ անգամ ոչ կիրառելի բնույթը: Ուստի ոչ առևտրային կազմակերպությունների միասնական կամ նույնիսկ տարբերակված հասկացության դուրսբերման և ընկալման նշանակալիությունը դժվար է գերազնահատել ոլորտի ուսումնասիրության և կիրառելիության ապահովման գործում, ինչին էլ ուղղված է սույն հետազոտությունը:

Քաղաքացիական օրենսգրքի մեջբերված իրավանորմը, թերևս, մատնանշում է երկու հիմնական հատկանիշ, որոնց վրա հիմնվելով՝ կարելի է առևտրային կազմակերպությունները տարբերակել ոչ առևտրայիններից: Օրենսդրի կարծիքով՝ նման

¹ Տե՛ս «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքը, ՀՕ-516-Ն, ՀՀՊՏ 2003.02.12/9(244), հոդ. 155, փոփոխություններ 16.12.2016 թ.:

հատկանիշներն են՝ իրավաբանական անձի գործունեության նպատակը և վերջինիս՝ ստացված շահույթն իր մասնակիցների միջև բաշխելու ունակությունը կամ դրա բացակայությունը:

Գրականության մեջ, ի թիվս ներկայացվածների, ոչ առևտրային կազմակերպությունների առանձնահատկությունների թվին են դասվում նրանց հատուկ իրավունակությունը, կազմակերպության լուծարման պարագայում՝ մնացած գույքի տնօրինման նպատակայնությունը, ինչպես նաև ոչ առևտրային կազմակերպությունների կազմակերպարավական ձևերի բազմազանությունը, որոնք չեն սահմանափակվում ՀՀ քաղաքացիական օրենսգրքում նախատեսվածներով¹, ինչի մասին կարելի է եզրակացնել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 51-րդ հոդվածի 4-րդ մասն ուսումնասիրելով: Այստեղ մասնավորապես սահմանվում է, որ ոչ առևտրային կազմակերպություն համարվող իրավաբանական անձինք կարող են ստեղծվել հասարակական միավորումների, հիմնադրամների *կամ օրենքով նախատեսված այլ ձևերով*:

Ըստ իրավաբանական անձի կազմակերպարավական ձևի՝ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների տարանջատման հնարավորությունը որոշակի պաշտպանության է արժանանում ոչ միայն օրենսդրորեն, այլև գիտական գրականության մեջ, մասնավորապես՝ որոշ իրավաբան գիտնականների կողմից²: Չնայած այն հանգամանքին, որ ներկայացված տեսակետը պաշտպանության չի արժանացել տեսաբանների լայն շրջանակի կողմից և ունի բավական թվով ընդդիմախոսներ³, սակայն հարկ ենք համարում ընդգծել, որ իրականում ոչ առևտրային կազմակերպությունները առևտրային կազմակերպություններից տարբերվում են հենց ներկայացված չափանիշի հիման վրա, որը, սակայն, պայմանավորված է այն հանգամանքով, որ ոչ առևտրային կազմակերպություններին տրված հասկացությունը չի առանձնացնում բոլոր ոչ առևտրային կազմակերպություններին բնորոշ անհրաժեշտ, էական և ընդհանուր այն հատկանիշների ամբողջությունը, որոնցով դրանք տարբերակվում են առևտրայիններից և միավորվում մեկ ընդհանուր հասկացության ներքո:

Ինչպես նշվեց, ոչ առևտրային կազմակերպությունների հիմնական հատկանիշները սահմանող նորմատիվ-իրավական գործող կարգավորումն ամրագրված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին մասում, որի բովանդակության մեջ կարելի է նկատել ոչ առևտրային կազմակերպություններն առևտրայիններից առանձնացնող հետևյալ հատկանիշները.

1. շահույթ ստանալու նպատակ չհետապնդելը, որպիսի չափանիշը կարելի է դասել կազմակերպության գործունեության նպատակը սահմանողների թվին
2. ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխելը:

¹ Տե՛ս, օրինակ, **Գабов А.В.** Некоммерческие организации: теоретические и практические проблемы // Законы России: опыт, анализ, практика. 2008, № 10, էջ 93; Валявина Е.Ю. Развитие законодательства о некоммерческих организациях // Журнал российского права. 2009, № 1, էջ 8:

² Տե՛ս, օրինակ, **Беляев К.П.** Некоммерческие организации в системе юридических лиц // Цивилистические записки: Межвуз. сб. науч. трудов. Вып. 3. Екатеринбург, էջեր 394-395:

³ Տե՛ս, օրինակ, **Кумаритова А.А.** Гражданско-правовое положение некоммерческих организаций в сфере благотворительной деятельности: Автореф. дис. ...канд. юрид. наук. М., 2006, էջ 13-14; **Костенко Н.В.** Гражданско- правовое регулирование деятельности некоммерческих организаций в Российской Федерации: Автореф. дис. ... канд. юрид. наук. Екатеринбург, 2004, էջ 11:

Այսպիսով, ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ քննարկվող առանձնացման հատկանիշներից առաջինը ոչ առևտրային կազմակերպությունների գործունեության նպատակն է, որը որակվում է որպես «շահույթ ստանալու նպատակ չհետապնդող»: Միևնույն ժամանակ ոչ առևտրային կազմակերպության գործունեության հնարավոր նպատակները նորմատիվորեն չեն սահմանվում: Հատկանշական է, որ գործող օրենդրական կարգավորումներում հղում կա ոչ առևտրային կազմակերպությունների **գործունեության** նպատակին, սակայն օրենսդրությունը լուռ է համապատասխան կազմակերպությունների **ստեղծման** նպատակի հարցում: Կարծում ենք, որ նման մոտեցումը, երբ ամրագրվում է բացառման սկզբունքով հատկանիշ (ոչ առևտրային է առևտրային չհամարվող իրավաբանական անձը), ընդունելի չէ ոչ առևտրային կազմակերպությունների բազմապրոֆիլ և խրթին ոլորտը կարգավորելու համար: Այսինքն ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ առևտրային կազմակերպությունները ոչ առևտրայիններից տարբերվում են նախ նրանով, որ վերջիններս զբաղվում են շահույթ ստանալու նպատակ չհետապնդող գործունեությամբ:

Այս հատկանիշը, մեր կարծիքով, չի կարող դրվել իրավաբանական անձանց վերոգրյալ տեսակները (առևտրային և ոչ առևտրային) միմյանցից տարանջատելու հիմքում՝ հետևյալ երկու պատճառներով. նախ այդ պարագայում անհասկանալի է ոչ առևտրային իրավաբանական անձանց տարանջատման երկրորդ հատկանիշի՝ ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխելու անհրաժեշտությունը, քանի որ եթե ոչ առևտրային կազմակերպությունները շահույթ ստանալու նպատակ հետապնդելու իրավունք չունեն, ապա, այնուամենայնիվ, ինչպե՞ս պետք է շահույթ ստանան, որպեսզի առաջանա ստացված շահույթը մասնակիցների միջև բաշխելու արգելք սահմանելու իրավական անհրաժեշտություն:

Բացի այդ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերության համաձայն՝ ոչ առևտրային կազմակերպությունը կարող է իր կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն, եթե դա նախատեսված է օրենքով: Ընդ որում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածի իմաստով ձեռնարկատիրական է հանդիսանում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է: Հիշյալ հոդվածով ամրագրված ձեռնարկատիրական գործունեության առանձնահատկությունները բացահայտվել են ՀՀ վճռաբեկ դատարանի կայացրած որոշումներում: Վերջինս ևս գտել է, որ շահույթ ստանալու նպատակ հետապնդելու ի սկզբանե ունեցած մտադրությունը և սեփական ռիսկով գործելը անհրաժեշտ պայմաններից են գործունեությունը ձեռնարկատիրական որակելու համար¹: Ավելին՝ «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքը, ինչպես նաև «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը մասնավորապես դրանց համապատասխանաբար 19-րդ և 8-րդ հոդվածները թույլատրում են հիմնադրամներին և հասարակական կազմակերպություններին զբաղվելու իրենց կանոնադրական նպատակներից բխող ձեռնարկատիրական, այսինքն՝ շահույթ ստանալու նպատակ հետապնդող գործունեությամբ: Հետևաբար՝ ոչ առևտրային կազմակերպությունները ևս կարող են զբաղվել շահույթ ստանալու նպատակ հետապնդող գործունեությամբ, որպիսի

¹ Տե՛ս, օրինակ, Բենիկ Ագարյանն ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության թիվ ՎԴ/5367/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.07.2016 թվականի որոշումը:

պարագայում ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված ոչ առևտրային կազմակերպություններին անհատականացնող առաջին տարրը չի հանդիսանում այդ կազմակերպություններն առևտրայիններից տարբերակող հատկանիշ: Ավելին, այս հատկանիշը չի կարող դիտվել ոչ առևտրային կազմակերպությունների համար որպես ընդհանուր, քանի որ դրանց որոշ տեսակներ (օրինակ՝ կուսակցությունները), այնուամենայնիվ, չունեն ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք:

Արտասահմանյան փորձի և միջազգային իրավական ակտերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ոչ առևտրային կազմակերպությունները առևտրայիններից տարանջատող հատկանիշ է ոչ թե այն, որ ոչ առևտրային կազմակերպությունները չեն կարող շահույթ ստանալու նպատակ հետապնդող գործունեությամբ զբաղվել, այլ այն, որ ոչ առևտրային կազմակերպությունները տարբերվում են իրենց ստեղծման նպատակով և չեն կարող ստեղծվել շահույթ ստանալու համար, այսինքն՝ հստակ տարբերակվում է կազմակերպության *ստեղծման ու գործունեության* նպատակը, և առևտրային կազմակերպություններից տարանջատելու համար հիմք է ընդունվում առաջինը:

Այս գաղափարը բխում է նաև Միավորված ազգերի կազմակերպության կողմից 2003 թվականին Նյու Յորքում տպագրված «Ազգային հաշվարկների համակարգում ոչ առևտրային կազմակերպությունների վերաբերյալ» ձեռնարկում, որը գրվել է Ջոն Հոփկինսի անվան «Քաղաքացիական հասարակության հետազոտման» համալսարանական կենտրոնի հետ սերտ համագործակցությամբ, և որը ստեղծելիս ՄԱԿ-ը նպատակ է ունեցել նպաստելու ոչ առևտրային կազմակերպությունների վերաբերյալ տեղեկատվություն հավաքելու և այն հասանելի դարձնելու գործին¹:

Շահույթ ստանալու նպատակ չհետապնդելը նախևառաջ նշանակում է, որ դրանք ստեղծվում են այլ նպատակով, քան շահույթ ստանալն է, ավելին՝ դրանք թեկուզև կարող են զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, սակայն շահույթ ստանալու նպատակ հետապնդող գործունեությունը չի կարող լինել դրանց հիմնական գործունեությունը ո՛չ ուղղակիորեն, ո՛չ էլ անուղղակիորեն, իսկ ստացված ողջ շահույթը պետք է ուղղվի ստեղծման նպատակների իրագործմանը:

Ուսումնասիրությունների արդյունքում հնարավոր է եզրակացնել, որ ոչ առևտրային կազմակերպությունների կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հնարավորությունը հստակ սահմանված և հիմնական գործունեությունից սահմանազատված չլինելու պատճառով շատ կազմակերպություններ իրենց հիմնական գործունեությունն ի սկզբանե ուղղում են շահույթի ստացմանը՝ բավական հաջող քողարկվելով հանրօգուտ նպատակների իրականացման ձևական հայտարարություններով՝ փաստացի վերածվելով առևտրային կազմակերպությունների: Նման իրավիճակը սովորաբար գնահատվում է որպես քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակիցների իրավահավասարության սկզբունքի հավասարակշռության խախտում, քանի որ ոչ առևտրային կազմակերպությունների նկատմամբ օրենսդրական խստացված պահանջներ ու պայմաններ չեն կիրառվում, որոնք առկա են առևտրային կազմակերպությունների նկատմամբ (նման պայմանների թվին կարելի է դասել նվազագույն կանոնադրական կապիտալի կազմա-

¹ Տե՛ս UNITED NATIONS PUBLICATION ST/ESA/STAT/SER.F/91 Handbook on Non-Profit Institutions in the System of National Accounts 2003, 2.4, էլեկտրոնային ռեսուրս https://unstats.un.org/unsd/publication/seriesf/seriesf_91e.pdf (վերջին մուտք՝ 31.05.17)

վորումը, շատ դեպքերում՝ առանց մեղքի պատասխանատվության սկզբունքի կիրառելիությունը և այլն): Հետևաբար ոչ առևտրային կազմակերպությունները ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս առավել շահավետ դիրքում են հայտնվում: Այս հանգամանքը ոչ առևտրային կազմակերպությունների սահմանման մեջ վերջիններիս կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության մասով առավել խիստ ու հստակ կարգավորումների ներդրման օգտին խոսող հիմնական փաստարկն է:

Քաղաքացիական իրավունքի գիտությունը ձգտում է սահմանել ոչ առևտրային կազմակերպությունների կողմից շահույթ ստանալու նպատակների իրագործման համար առավել արդյունավետ չափանիշներ, որոնց կիրառմամբ հնարավոր կլինի պնդել, որ նման գործունեությունն իր բնույթով այլ է, քան ծավալում են առևտրային կազմակերպությունները: Իրավաբանական գրականության մեջ պարբերաբար ընդգծվում է այն հանգամանքը, որ միանշանակ սահմանել, թե ոչ առևտրային կազմակերպությունների գործունեության որ նպատակն է հանդիսանում հիմնական, իսկ որը՝ երկրորդային, հնարավոր չէ¹: Նման տարրերի տարանջատման համար բավարար չափանիշներ չկան, մանավանդ եթե հաշվի առնվի, որ որոշ դեպքերում շահույթի ստացման նպատակը և հանրօգուտ նպատակը կարող են հավասար չափաբաժիններով առկա լինել:

Վերոգրյալ խնդիրները գիտնականները դիտում են որպես իրավաբանական կազմակերպությունները առևտրային և ոչ առևտրային տարատեսակների տարանջատման առկա սահմանումը վերանայելու հիմնական չափանիշ, այսինքն՝ ոչ առևտրային իրավաբանական անձանց առևտրայիններից հստակ տարանջատելու համար պետք է բավականաչափ հստակ սահմանվի վերջինիս գործունեության հիմնական և երկրորդային ուղղությունների ու նպատակների չափանիշները: Այս առումով արվող առաջարկները բավական բազմազան են, որոնցից կարելի է առանձնացնել չորս հիմնական դիրքորոշում:

Առաջին՝ անհրաժեշտ է հրաժարվել ոչ առևտրային կազմակերպությունների գործունեության հիմնական նպատակի չափորոշիչների նորմատիվային ամրագրման գաղափարից՝ բացառելով ոչ առևտրային կազմակերպությունների սահմանման մեջ համապատասխան նպատակի հիշատակումը՝ հնարավորություն ընձեռելով ոչ առևտրային կազմակերպություններին առանց որևէ սահմանափակման զբաղվելու առևտրային գործունեությամբ՝ պահպանելով միայն ծավալած առևտրային գործունեությամբ ստացված շահույթի բաշխման արգելքը²:

Երկրորդ՝ առաջինին ամբողջապես հակառակ կարծիք է, համաձայն որի՝ ոչ առևտրային կազմակերպությունների համար պետք է հստակ ամրագրել ձեռնարկատիրական (եկամուտ բերող) գործունեությամբ զբաղվելու հնարավորության սահմանափակումը՝ թույլատրելով միայն իրենց անձնական ֆինանսական միջոցները ներդնել վարկային կազմակերպություններում, արժեթղթերում, վարձակալուր-

¹ Տե՛ս, օրինակ, **Ивкова О.В.** Участие некоммерческих организаций в предпринимательской деятельности: Автореф. дис. ... канд. юрид. наук. СПб., 2004, էջ 8:

² Տե՛ս, օրինակ, Комментарий к Гражданскому кодексу Российской Федерации, часть I первой (постатейный) / Под ред. О.Н. Садикова. М., 2005. էջ 155 (автор комментария - В.А. Рахмилович); **Степанов Д.И.** В поисках критерия разграничения юридических лиц на два типа и принципа обособления некоммерческих организаций // Вестник гражданского права. 2007. № 3, էջ 48; **Меняев А.В.** Правовое положение и система некоммерческих организаций в российском гражданском праве: Автореф. дис. ... канд. юрид. наук. Волгоград, 2011, էջ 9:

յան հանձնել հավելյալ կամ չչափազործվող անշարժ գույքը, քանի որ նման գործունեությունը ձեռնարկատիրական չէ¹, ինչպես նաև ամրագրել, որ նրանք կարող են ստեղծել առևտրային կազմակերպություններ՝ դրանց պատվիրակելով ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավասություն այն դեպքում, երբ առկա է դրա անհրաժեշտությունը²: Հայաստանի Հանրապետությունում ևս մինչ վերջին օրենսդրական փոփոխությունները, մասնավորապես «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը սահմանում էր, որ համապատասխան կազմակերպությունները հնարավորություն ունեն զբաղվելու ձեռնարկատիրական գործունեությամբ բացառապես առևտրային կազմակերպություններ ստեղծելու եղանակով: Իհարկե ոչ առևտրային կազմակերպությունների սահմանմամբ նման կարգավորում ամրագրելը կարող է լուծել վերջիններիս գործունեության հիմնական և երկրորդային ուղղությունների տարանջատման մասով առկա երկվությունն ու անորոշությունը, սակայն կարծում ենք, որ անհնարին կդարձնի համապատասխան կազմակերպությունների բազում հանրօգուտ նպատակների իրագործումը:

Երրորդ՝ հիմնավորվում է համապատասխան չափանիշի պահպանումն այնպիսի տեսքով, որն առկա է ՀՀ քաղաքացիական օրենսգրքում, այսինքն՝ սահմանելով ոչ առևտրային կազմակերպությունների կողմից իրենց կանոնադրական նպատակների իրագործման նպատակով և միայն այդ նպատակներին համապատասխան ձեռնարկատիրական գործունեության իրականացումը, միաժամանակ նախատեսել առավել կոշտ սահմանափակումներ ոչ առևտրային կազմակերպությունների կողմից այնպիսի գործունեությամբ զբաղվելու համար, որոնք կոչված են ապահովելու դրա համապատասխանությունը կազմակերպության ստեղծման նպատակներին³:

Միևնույն ժամանակ, նման մոտեցմանը հետևելիս կարիք է նկատվում օրենսդրորեն ամրագրել որոշակի ուղեմիջներ և սահմաններ, որոնք հնարավորություն են ընձեռում բացառել ոչ առևտրային կազմակերպությունների և դրանց հիմնադիրների կողմից հնարավոր չարաշահումները, գործունեության նպատակներն ու տեսակները սահմանելիս, ինչպես նաև կանխարգելել քաղաքացիաիրավական շրջանառության մյուս մասնակիցների, հատկապես՝ առևտրային կազմակերպությունների իրավունքների և օրինական շահերի հնարավոր խախտումները՝ առաջացնելով անհավասար մրցակցություն: Հարկ է հետևել ոչ առևտրային կազմակերպությունների և հասարակության ու պետության շահերի հավասարակշռության պահպանմանը՝ ոչ առևտրային կազմակերպություններին հնարավորինս զերծ պահելու հանրօգուտ նպատակների իրագործման ընթացքում իրականացվող գործունեության անհիմն սահմանափակումներից: Դիտարկվող հիմնախնդրի արդյունավետ լուծում որոնելիս հարկավոր է հաշվի առնել ոչ առևտրային կազմակերպությունների կողմից հետապնդվող նպատակների և դրանց ստեղծման պատճառների բնույթն ու բազմազանությունը, քանի որ եթե դրանց որոշ մասը միանգամայն ունակ է իր գործունեությունն իրականացնել և նպատակներն իրացնել առանց եկամուտ ապահովող գործունեությամբ զբաղվելու, ապա մյուսների գոյությունն առանց նման գործունեություն իրականացնելու զուրկ է որոշակի տնտեսական և սոցիալական իմաս-

¹ Տե՛ս **Костенко Н.В.** նշվ. աշխ., էջեր 10-11:

² Տե՛ս **Ивкова О.В.** նշվ. աշխ., էջ 8:

³ Տե՛ս, օրինակ, **Сидоров В.Н.** Правосубъектность некоммерческих организаций. М., 2007. էջ 38, 79; **Серова О.А.** Классификационные критерии деления юридических лиц по цели деятельности // Юридический мир. 2010, № 4, էջ 23:

տից: Ոչ առևտրային կազմակերպությունների տարբերակումը բացառում է բոլորի հանդեպ միատեսակ կարգավորումներ մշակելու և կիրառելու հնարավորությունը: Մի տեսակի ոչ առևտրային կազմակերպությունների համար արդյունավետ կարգավորումները կարող են մյուս տեսակի համար խոչընդոտ հանդիսանալ վերջիններիս ընտրված հանրօգուտ նպատակներին հասնելու և որդեգրված ուղով շարժվելու համար: Որպես օրինակ կարելի է դիտարկել հասարակական կազմակերպությունների և կուսակցությունների ֆինանսավորման աղբյուրների տարբերակումը, որի պարագայում, հաշվի առնելով գործունեության նպատակներն ու ուղղվածությունները, ակնհայտ է, որ եթե առաջինները, պետական և ազգային շահերից ելնելով, ենթակա են ֆինանսավորման աղբյուրների մասով սահմանափակումների, ապա երկրորդների դեպքում նույն սահմանափակումների կիրառումն ակնհայտորեն խոչընդոտելու է վերջիններիս կանոնադրական նպատակների արդյունավետ իրականացումը, առավել ևս որ այս պարագայում պետական և ազգային շահի հետ հակադրության խնդիր առհասարակ չի առաջանում:

Չորրորդ՝ առաջարկվում է, մեր կարծիքով, առավել ընդունելի տարբերակ. ոչ առևտրային և առևտրային կազմակերպությունների սահմանազատման համար կիրառել ոչ թե դրանց գործունեության, այլ ստեղծման նպատակները: Ի հիմնավորումն արտահայտած դիրքորոշման՝ նշվում է, որ այն պայմաններում, որտեղ օրենքը չի արգելում հանրորեն օգտակար նպատակներ իրագործելիս ստանալ եկամուտ, դա կարող է լինել ոչ առևտրային կազմակերպությունների գործունեության նպատակներից միայն մեկը, սակայն չի կարող դառնալ նման կազմակերպությունների ստեղծման նպատակ¹: Միևնույն ժամանակ ընդգծվում է, որ հենց ստեղծման նպատակներն են հնարավորություն տալիս տարանջատել այն կազմակերպությունները, որոնք բավարարում են հասարակության և պետության առավել լայնածավալ պահանջումները, որոնք չեն կարող իրացվել կազմակերպության գույքային շահագրգռվածության առկայության պարագայում: Նման մոտեցումը հնարավորություն է տալիս առավել ամբողջապես արտացոլել ոչ առևտրային կազմակերպությունների էությունն ու նշանակությունը:

Այսպիսով, կարծում ենք, որ ոչ առևտրային կազմակերպությունները առևտրայիններից տարանջատելու հիմքում պետք է դրվի դրանց ստեղծման նպատակը, նպատակ, որը կանխորոշվում է կազմակերպության ստեղծողի կողմից և մարմնավորում դրա որոշակի պահանջումները: Առևտրային կազմակերպության համար այդ նպատակը միշտ շահույթ ստանալն է, իսկ դրա իրացումը ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու միջոցով հնարավորություն է տալիս բավարարելու հիմնադիրների նյութական կարիքները:

ԱՄՆ Միչիգան նահանգի գերագույն դատարանը, դեռևս 1919 թվականին կայացված որոշմամբ անդրադառնալով առևտրային կազմակերպությունների ստեղծման նպատակին, դիրքորոշում է հայտնել առ այն, որ առևտրային ընկերությունները ստեղծվում են առավելագույն շահույթ ստանալու նպատակով: Այս որոշումը վերաբերում էր Հենրի Ֆորդին, ով «Ford Motor» ընկերության ակտիվների մեծ մասի բաժնետերն ու հիմնադիրն էր, և նրա եղբայրներ Ջոն և Հորացիուս Դոջերին, ովքեր այդ կազմակերպության փոքր մասի բաժնետերերն էին: Դոջ եղբայրները հայց էին ներկայացրել դատարան ընդդեմ Ֆորդի՝ պնդելով, որ վերջինս օգտագործում էր իր

¹ St`u **Кашковский О.П.** О критериях разграничения коммерческих и некоммерческих организаций // Юрист. 2000, № 5, էջեր 10-11:

գերիշխող դիրքը՝ կազմակերպության բաժնետերերին վճարվող շահաբաժինը սահմանափակելու համար, չնայած այն աշխատում էր շահութաբերությամբ: Ֆորդն իր այդ քաղաքականությունը բացատրում էր նրանով, որ շահույթն ուղղվում էր առավել որակյալ և էժան մեքենաներ ստեղծելու նպատակի իրագործմանը, սակայն Միչիգանի գերագույն դատարանն իր որոշմամբ պարտավորեցրեց վճարել շահաբաժինները՝ գտնելով, որ չպետք է շփոթունք առաջանա այն հարցում, որ առևտրային կազմակերպությունը ստեղծվում և գործունեություն է ծավալում մեկ հիմնական նպատակով՝ բաժնետերերի համար ապահովել առավելագույն շահույթ, և տնօրենների հայեցողությունը կարող է դրսևորվել միայն այդ նպատակին հասնելու շրջանակներում և չի կարող իրացվել այլ նպատակներով¹: Հետագայում այս գործը բազմիցս հիշատակել են տարբեր գիտնականներ և դատական ատյաններ՝ նշելու համար, որ առևտրային ընկերությունները ստեղծվում են «առավելագույն շահույթ ապահովելու նպատակով»²:

Նոբելյան մրցանակակիր, տնտեսագետ Միլթոն Ֆրիդմանը 1970 թվականին «New York Times» ամսագրում տպագրած «Բիզնեսի հասարակական պատասխանատվությունն իր շահույթի մեծացումն է» վերտառությամբ հոդվածում³ գովաբանել է առևտրային ընկերության ստեղծման այդ նպատակը: Նույն կարծիքին է նաև Ջոել Բականը, ով 2004 թվականին հրատարակել է «The Corporation: The Pathological Pursuit of Profit and Power» գիրքը և մրցանակի արժանացած նույնանուն ֆիլմը: Նա ընդունում է առևտրային կազմակերպությունների՝ առավելագույն շահույթի հասնելու նպատակով ստեղծված լինելու հանգամանքը, որոնք, ըստ նրա, այդ նպատակին հասնելու համար հաշվի չեն առնում օրենքները, հասարակության շահերը, հետևաբար նա դրանք անվանել է «հիվանդագին և վտանգավոր»⁴ երևույթ:

Ի հակադրություն վերոգրյալի՝ ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծումն ունի որոշակի այլ նպատակներ, որոնք կապված չեն ձեռնարկատիրության և շահույթի ստացման հետ: Ոչ առևտրային կազմակերպությունների հասկացությանն անդրադարձել է նաև 2007 թվականի հոկտեմբերի 10-ի Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի ընդունած թիվ CM/Rec(2007)14 հանձնարարականը (այսուհետ նաև՝ Հանձնարարական), որը վերաբերում է Եվրոպայում ոչ կառավարական կազմակերպությունների իրավական կարգավիճակին⁵: Այս Հանձնարարականը, որի նախապատրաստումը Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում ոչ առևտրային կազմակերպությունների գործունեության դրական պրակտիկայի, տվյալ ոլորտին վերաբերող միջազգային իրավական ակտերի ուսումնասիրության և ընդհանրացման արդյունք է, հստակ նշում է, որ ոչ առևտրային են այն կազմա-

¹ St´u Dodge v. Ford Motor Co., 170 N.W. 668 (Mich. 1919) 684 գործով ԱՄՆ Միչիգան նահանգի գերագույն դատարանի որոշումը, էլեկտրոնային ռեսուրս <https://h2o.law.harvard.edu/cases/3965> (վերջին մուտք՝ 31.05.17):

² St´u **Marjorie Kelly**, The divine right of capital: dethroning the corporate aristocracy, San Francisco: Berrett-Koehler, 2001, Xvii էջեր 52-53:

³ St´u **Milton Friedman**. The Social Responsibility of Business If to Increase ts Profits, N.Y. TnMEs MAG., Sept. 13, 1970, էջ 33, էլեկտրոնային ռեսուրս <http://www.colorado.edu/studentgroups/libertarians/issues/friedman-soc-resp-business.html> (վերջին մուտք՝ 31.05.17):

⁴ St´u **Joel Bakan**. The corporation: the pathological pursuit of profit and power (2004):

⁵ Առավել մանրամասն տե՛ս Legal Statuse of Non-governmental organizations in Europe: Recommendation CM/Rec(2007) 14 and explanatory memorandum, Council of Europe Publishing, էլեկտրոնային ռեսուրս [https://www.coe.int/t/dghl/standardsetting/cdcj/CDCJ%20Recommendations/CMRec\(2007\)14E_Legal%20status%20of%20NGOs.pdf](https://www.coe.int/t/dghl/standardsetting/cdcj/CDCJ%20Recommendations/CMRec(2007)14E_Legal%20status%20of%20NGOs.pdf) (վերջին մուտք՝ 15.05.2017թ.):

կերպությունները, որոնք, ի թիվս այլ հատկանիշների, ստեղծվում են շահույթ ստանալու նպատակ չհետապնդող գործունեությամբ զբաղվելու համար¹: Այսինքն՝ այն ևս ընդգծում է, որ ոչ առևտրային կազմակերպությունները տարբերվում են իրենց ստեղծման նպատակով: Ավելին՝ Հանձնարարականը նաև նշում է ոչ առևտրային կազմակերպությունների կողմից շահույթ ստանալուն ուղղված և տնտեսական այլ գործունեությամբ զբաղվելու հնարավորությունը, որոնցից ստացվող եկամուտը պետք է ուղղվի կազմակերպության ստեղծման նպատակների իրագործմանը:

ՀՀ-ում ոչ առևտրային կազմակերպությունների տարբերակման երկրորդ՝ օրենսդրորեն ամրագրված հատկանիշը վերջիններիս ստացած շահույթը կազմակերպության մասնակիցների միջև բաշխելու արգելքն է (ՀՀ քաղաքացիական օրենսգրքը, հոդված 51, մաս 1): Ստացված շահույթը պետք է ուղղվի այն նպատակների իրագործմանը, որոնց համար ստեղծվել է համապատասխան ոչ առևտրային կազմակերպությունը: Հենց եկամտի բաշխման արգելքն է, որոշ գիտնականների կարծիքով, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների տարբերակման հիմնական, ամենից նշանակալի և արդյունավետ չափանիշը²: Միջազգային փորձի ուսումնասիրությունը ևս վկայում է, որ ստացված շահույթը կազմակերպության մասնակիցների միջև բաշխելու արգելքն այն հիմնարար հատկանիշներից է, որոնցով այս տիպի կազմակերպություններն առանձնանում են³:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում հիշյալ հատկանիշը որպես համընդհանուր դիտարկելը հնարավոր չէ: *Առաջին հերթին* նման եզրահանգման համար հիմք է այն հանգամանքը, որ իրականում գոյություն ունեն որոշակի տեսակի ոչ առևտրային կազմակերպություններ, որոնց դեպքում ստացված եկամտի բաշխում, այնուամենայնիվ, իրականացվում է: Օրինակ՝ «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ ակտիվների արժեթղթավորումը տեղի է ունենում արժեթղթավորման հիմնադրամի պարտադիր մասնակցությամբ: Ընդ որում, ակտիվների խմբի մնացորդային արժեքը, որն արժեթղթավորման հիմնադրամի՝ ակտիվներով ապահովված արժեթղթերի թողարկումից բխող պարտավորությունների կատարումից հետո մնացած եկամուտների, ակտիվների իրացումից ստացված և (կամ) ստացվելիք միջոցների կամ դրանց գծով այլ վճարների հանրագումարն է, նույն օրենքի 27-րդ հոդվածի համաձայն՝ արժեթղթավորման հիմնադրամի սեփականությունն է և կարող է տնօրինվել կանոնադրությամբ և ազդագրում նշված կարգով: Այդ եկամուտը տնօրինելու համար արժեթղթավորման հիմնադրամը թողարկում է մասնակցության վկայագրեր, որոնք վաճառում է ներդրողներին, վերջիններս էլ իրենց հերթին հետագայում արժեթղթավորման հիմնադրամի եկամտի նկատմամբ ունեն փայի իրավունք: Այսինքն՝ ակտիվների արժեթղթավորման հետ կապված պարտավորությունները կատարելուց հետո մնացած եկամուտը ևս օգտագործվում է առևտրային նպատակով, մինչդեռ դա հակասում է ոչ առևտրային կազմակերպությանների՝ ստացված շահույթը չբաշխելու սկզբունքին:

Երկրորդ հերթին նման միասնականացումը հնարավոր չէ, քանի որ մինչ այժմ հստակ կարգավորում կամ մեկնաբանություն՝ ոչ առևտրային կազմակերպություն-

¹ Առավել մանրամասն տե՛ս նույն տեղում:

² Տե՛ս, օրինակ, **Степанов Д.И.** նշվ. աշխ.:

³ Տե՛ս, օրինակ, **Сидоров В.Н.** Правосубъектность некоммерческих организаций. М., 2007, էջ 18:

ների կողմից եկամուտ ապահովող գործունեությամբ զբաղվելու տնտեսական բովանդակության և էության մասին առկա չէ:

Եվ **երրորդ հերթին**, կան ոչ առևտրային կազմակերպությունների որոշ տեսակներ, որոնց դեպքում ինքնուրույն ձեռարկատիրական գործունեությամբ զբաղվելը օրենքով ուղղակիորեն սահմանված չէ, ինչպիսիք են, օրինակ, կուսակցությունները: Այս դեպքում իրավաչափորեն երկու հարց է առաջանում: Առաջինը՝ եթե նման գործունեությամբ անձամբ զբաղվելու հնարավորությունն ուղղակիորեն ոլորտը կարգավորող օրենսդրությամբ սահմանված չէ, ապա կարո՞ղ է արդյոք համապատասխան ոչ առևտրային կազմակերպությունը անձամբ իրականացնել առևտրային գործունեություն, և եթե ոչ, ապա այդ դեպքում ինչպե՞ս է հնարավոր պնդել, որ քննարկվող չափանիշը միասնական է բոլոր տեսակի ոչ առևտրային կազմակերպությունները առևտրայիններից տարանջատելու համար:

Հաճախ որպես ստացված եկամտի բաշխման ընդունված մեխանիզմ դիտարկվում է ոչ առևտրային կազմակերպությունների կողմից իր ղեկավարների, կառավարման մարմինների անդամների աշխատանքի վարձատրությունը: Մասնավորապես՝ կարծիք է արտահայտվում, որ ոչ առևտրային կազմակերպության հետ աշխատանքային պայմանագրի կնքումը, որը նախատեսում է աշխատավարձի վճարում, համապատասխան կազմակերպության ստացած եկամտից բաժին ստանալու միանգամայն օրինական ճանապարհ: Միաժամանակ, սակայն, հաշվի չի առնվում այն հանգամանքը, որ նախ՝ աշխատավարձը ոչ առևտրային կազմակերպության ղեկավար կազմին վճարվում է որպես վերջիններիս կողմից իրականացվող վարձու աշխատանքի հատուցում: Երկրորդ՝ որպես կանոն և ինչպես դա սահմանվում է օրենսդրական կարգավորումների համաձայն, համապատասխան աշխատանքի վարձատրության աղբյուր է համապատասխան աշխատավարձի ֆոնդը, որը կարող է ձևավորվել ոչ միայն ստացված շահույթից, այլ նաև այլ աղբյուրներից, ինչպիսիք են, օրինակ, անդամավճարները:

Ինչպես արդեն նշվեց, ՀՀ օրենսդրությամբ ոչ առևտրային կազմակերպությունների բնորոշումը ներառում է միայն վերոգրյալ երկու հատկանիշները, սակայն դրանցից մեկը՝ իրենց գործունեությամբ շահույթ ստանալու նպատակ չհետապնդելը, չի արտացոլում այդպիսի կազմակերպություններին բնորոշ առանձնահատկություն, քանի որ ՀՀ-ում օրենսդրական փոփոխություններից հետո հիմնադրամներին և հասարակական կազմակերպություններին տրվել է անմիջականորեն շահույթ ստանալու նպատակ հետապնդող գործունեությամբ զբաղվելու իրավունք: Ավելին, ոչ առևտրային կազմակերպությունները տարբերվում են ոչ թե գործունեության, այլ ստեղծման նպատակով: Ինչ վերաբերում է երկրորդ չափանիշին՝ ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխելու սկզբունքին, ապա դա թեև համահունչ է միջազգային փորձին և գիտնականների կողմից ոչ առևտրային կազմակերպությունների իրավական ընկալմանը, այնուամենայնիվ ՀՀ-ում այդ սկզբունքը չի ապահովվում ամբողջությամբ, օրինակ՝ արժեթղթավորման հիմնադրամների դեպքում: Սակայն, մեր կարծիքով, դա ոչ թե սկզբունքի բացակայության մասին է խոսում, այլ դրա խախտման և արժեթղթավորման հիմնադրամների համար ոչ ճիշտ կազմակերպահրավական ձևի ընտրության:

Վերոգրյալից բացի՝ անհրաժեշտ է նշել, որ միջազգային փորձի և գիտական աշխատությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ոչ առևտրային կազմակերպությունների հասկացությունը ներառում է այլ՝ ոչ պակաս կարևոր տարրեր,

որոնք ՀՀ իրավական համակարգում բացակայում են և բազմաթիվ գործնական խնդիրների պատճառ դառնում:

ՀՀ-ում ընդունվել է այն տարբերակը, որ ոչ առևտրային են համարվում բոլոր իրավաբանական անձինք, որոնք առևտրային չեն, ինչը, մեր կարծիքով, արդարացված չէ և չի բխում այդ կազմակերպությունների էությունից: Ի հակադրություն դրա՝ արտասահմանյան փորձը ցույց է տալիս, որ ոչ առևտրային կազմակերպություններն ունեն որոշակի հատկանիշներ, որոնք չեն սահմանափակվում միայն դրանց ստեղծման նպատակով և շահույթը չբաշխելու սկզբունքով: Մասնավորապես, ՄԱԿ-ի կազմած վերոգրյալ ձեռնարկի համաձայն՝ ոչ առևտրային կազմակերպությունների հիմնական տարբերակիչ հատկանիշներն են.

1. իրենց գործունեությունից ստացված շահույթը բաշխելու արգելքը, որով նրանց գոյության նպատակը էապես տարբերվում է առևտրային կազմակերպություններից,

2. նրանց ներգրավվածությունը հանրային բարիքի ստեղծմանը՝ ի հավելումն մասնավոր բարիքի, որը նրանք ստեղծում են,

3. եկամտի ձևավորման կառուցվածքը, որը մեծ մասամբ ներառում է գումարի և ժամանակի կամավոր ներդրումներ,

4. կամավորների, ինչպես նաև վարձու աշխատողների ներուժի օգտագործումն ու համատեղումը,

5. հարկային արտոնություններ ունենալը,

6. հատուկ իրավական կարգավորումների առարկա լինելը՝ կառավարման, հաշվետվություններ ներկայացնելու և նմանատիպ այլ հարցերում,

7. պետաիշխանական (կառավարչական) լիազորությունների բացակայություն, չնայած որ մասնակցում են հանրային բարիքի ստեղծմանը¹:

Միևնույն ժամանակ ընդգծվում է այն հանգամանքը, որ ոչ առևտրային կազմակերպությունների բնույթը սահմանելիս պետք է տրվի այնպիսի հասկացություն, որն ունակ է հստակեցնելու դրանց տարբերությունը ինչպես կառավարությունից՝ հանրային իշխանական մարմիններից, այնպես էլ առևտրային կազմակերպություններից²: Ավելին, հասկացությունը պետք է լինի բավարար չափով չեզոք, որպեսզի կիրառելի լինի տարբեր ազգային իրավական համակարգերում:

Հիմնվելով Ջոն Հոփկինսի «Ոչ առևտրային ոլորտի համեմատական ծրագրի», ինչպես նաև ավելի քան 35 պետություններ ներկայացնող գիտնականների ընդհանուր ջանքերով սահմանված հասկացության վրա՝ առաջարկվել է ոչ առևտրային կազմակերպությունների կառուցվածքային-գործառնության հետևյալ հասկացությունը, ըստ որի՝ ոչ առևտրային են այն կազմակերպությունները, որոնք ունեն հետևյալ հատկանիշները.

1. կազմակերպվածության որոշակի մակարդակի առկայություն,

2. մասնավոր բնույթ՝ այն առումով, որ առանձնացված են կառավարությունից և չունեն հանրային իշխանական բնույթ,

3. չեն բաշխում ստացված շահույթը,

4. ինքնակառավարվող են. ինքնուրույն են կառավարում և վերահսկում իրենց գործունեությունը,

¹ St'u United Nations publication st/esa/stat/ser.f/91 Handbook on Non-Profit Institutions in the System of National Accounts 2003, 2, 9, էլեկտրոնային ռեսուրս https://unstats.un.org/unsd/publication/seriesf/seriesf_91e.pdf (վերջին մուտք՝ 31.05.17)

² St'u նույն տեղում, 2.10 :

5. կամավոր են, այսինքն՝ ոչ պարտադիր են՝ ներառելով որոշակի ինքնակամ մասնակցություն¹:

Որպես առաջնային կարևորության տարր ընդգծվում է կառավարությունից տարանջատված լինելու հանգամանքը՝ ոչ կառավարական բնույթը, որը բնորոշ է ոչ առևտրային կազմակերպությունների էության վերաբերյալ պետությունների գերակշիռ մեծամասնության ընկալմանը: Ինքնակառավարման չափանիշը տարբերակում է այս կազմակերպություններին այնպիսի կազմակերպություններից, որոնք արդյունավետորեն վերահսկվում են այլ հաստատությունների, օրինակ՝ կառավարության կամ առևտրային ընկերությունների կողմից: Ավելին, ոչ առևտրային կազմակերպությունների կողմից իրականացվող գործունեության վերահսկողությունը կարելի է դուրս բերել պետախիշխանական ոլորտի հայեցողությունից, և այս հարցում բարենպաստ դեր կարող է խաղալ արտասահմանյան երկրների փորձը: Օրինակ, ԱՄՆ-ում նման կազմակերպությունների գործունեությունը վերահսկվում է կամավորության սկզբունքով ստեղծված կազմակերպությունների (այսպես կոչված հսկող խմբերի) կողմից, որոնք հասարակության և զանգվածային լրատվության միջոցների համար ծառայում են որպես ոչ առևտրային կազմակերպությունների վերաբերյալ տեղեկատվության աղբյուր: Նման պայմաններում պետական միջամտությունը քննարկվող ոլորտի վրա կրճատվում է, իսկ գործունեության թափանցիկության մակարդակը, որի առկայությամբ ոչ առևտրային կազմակերպությունների կողմից իրավունքների չարաշահումն առավել դժվար է դառնում, մեծանում է:

Ինչ վերաբերում է Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի Հանձնարարականին, ապա դրա համաձայն՝ ոչ առևտրային (ոչ կառավարական) կազմակերպությունները ինքնակառավարվող, կամավոր կազմակերպություններ են, որոնք ստեղծված են իրենց մասնակիցների կամ հիմնադիրների՝ շահույթ ստանալու հետ չկապված հիմնական նպատակներն իրագործելու համար: Դրանք կարող են ունենալ կամ չունենալ իրավաբանական անձի կարգավիճակ, լինել ազգային կամ միջազգային: Բացի այդ, Հանձնարարականի համաձայն՝ ոչ առևտրային կազմակերպությունները կարող են ունենալ անդամություն կամ չունենալ, որը հիմնված է լայն առումով «հիմնադրամ» և «միավորում» հասկացությունների տարբերության վրա: Ըստ Հանձնարարականի բացատրական հուշագրի՝ «միավորում» է համարվում անձանց միությունը որոշակի նպատակ իրագործելու շուրջ, իսկ «հիմնադրամ»՝ որոշակի սեփականության հատկացումը կանխորոշված նպատակի իրագործմանը: Ոչ առևտրային կազմակերպությունները, ըստ Հանձնարարականի, չպետք է ուղղորդվեն հանրային իշխանության կողմից²:

Ինչպես տեսնում ենք, և՛ Հանձնարարականը, և՛ միջազգային-իրավական այլ փաստաթղթեր ոչ առևտրային կազմակերպությունների հասկացությանն անդրադառնալիս, շահույթ ստանալու հետ չկապված նպատակների իրագործման համար ստեղծված լինելուց և շահույթը չբաշխելու սկզբունքից բացի, առանձնացնում են այլ հատկանիշներ ևս՝ ինքնակարգավորվող բնույթը, կամավորությունը և ոչ կառավարական բնույթը: Ոչ կառավարական բնույթը, ինչպես արդեն նշվել է, նշանակում է, որ այն պետք է պետական ապարատից առանձնացված լինի ինստիտուցիոնալ առումով և ինքնուրույն պետախիշխանական լիազորություններով օժտված չլինի: Կազմակերպությունը կարող է զգալի ֆինանսական օժանդակություն ստանալ կա-

¹ Տե՛ս նույն տեղում, 2.11:

² Առավել մանրամասն տե՛ս Legal Statute of Non-governmental organizations in Europe: Recommendation CM/Rec(2007) 14 սկզբունք թիվ 6, Council of Europe Publishing, էլեկտրոնային ռեսուրս [https://www.coe.int/t/dghl/standardsetting/cdcj/CDCJ%20Recommendations/CMRec\(2007\)14E_Legal%20status%20of%20NGOs.pdf](https://www.coe.int/t/dghl/standardsetting/cdcj/CDCJ%20Recommendations/CMRec(2007)14E_Legal%20status%20of%20NGOs.pdf) (վերջին մուտք՝ 15.05.2017թ.):

ռավարությունից և պետական պաշտոնյաներ ունենալ իր կառավարման մարմիններում, այնուամենայնիվ այն պետք է ունենա կառավարման բավարար ազատություն՝ կապված իր արտադրության, ֆինանսական միջոցների տնօրինման հետ, և դրա գործունեությունը չի կարող ընդգրկվել կառավարության ֆինանսական ոլորտ: Ինքնակառավարվող լինել նշանակում է, որ այն ունակ է ինքնուրույն կառավարել իր գործունեությունը և չի գտնվում որևէ այլ հաստատության արդյունավետ վերահսկողության ներքո, այսինքն՝ պետք է ունենա իր ներքին կառավարման համակարգը և էական ինքնավարություն: Այս հատկանիշի համար կարևոր չէ, թե ով է ստեղծել կազմակերպությունը, այլ՝ որ ունենա ինքնուրույնություն:

Ինքնակառավարվող և ոչ կառավարական բնույթը սերտորեն փոխկապակցված են և նշանակում են ոչ միայն ինքնուրույնություն կազմակերպությունը հիմնելիս և նպատակներն ընտրելիս, այլև կառավարման մեթոդներն ու նպատակներին հասնելու ձևերն ընտրելիս: Այլ կերպ ասած՝ հանրային իշխանությունը չպետք է փորձի ոչ առևտրային կազմակերպությունը դարձնել իր արդյունավետ վերահսկողության ներքո գործող կառույց: Այս գաղափարն ընդունվել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) կողմից, և դրա խախտումը հանգեցրել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 11-րդ հոդվածով երաշխավորված միավորվելու ազատության իրավունքի խախտման *Sigurdur A Sigurjonsson v. Iceland* գործով¹: Այլ գործերով Եվրոպական դատարանը Կոնվենցիայի խախտում է արձանագրել, երբ հանրային իշխանությունը միջամտել է ոչ առևտրային կազմակերպության ղեկավարների կամ ներկայացուցիչների ընտրությանը²: Վերոգրյալը չի նշանակում, որ հանրային իշխանությունը չի կարող օգնություն ցույց տալ ոչ առևտրային կազմակերպություններին որոշակի նպատակի իրագործմանը հասնելու համար, որը, ըստ կառավարության, ունի հատուկ կարևորություն հասարակության համար, սակայն կազմակերպությունը պետք է ազատ լինի այդ օգնությունն ընդունելու կամ դրանից հրաժարվելու հարցում: Ավելին, ո՛չ օրենսդրական, ո՛չ էլ այլ մեթոդներով հանրային իշխանությունը չպետք է ճնշի ոչ առևտրային կազմակերպություններին հասարակական կարևորություն ունեցող որևէ կոնկրետ գործունեությամբ զբաղվելու համար:

Ներկայացված խնդիրները վկայում են, որ ոչ առևտրային կազմակերպությունների և դրանց գործունեության սկզբունքների մասին ներկայիս պատկերացումները, որոնք օրենսդրական ամրագրում են ստացել, ձևավորվել են հաշվի չառնելով տնտեսական և սոցիալական այն դերը, որը համապատասխան կազմակերպությունները կոչված են իրականացնելու քաղաքացիական հասարակության և տնտեսավարման շուկայական մեխանիզմների գոյության պայմաններում: Ավելին՝ Հայաս-

¹ Տե՛ս *Sigurdur A Sigurjonsson v. Iceland*, no. 16130/90 գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռը ար 30.06.1993, էլեկտրոնային ռեսուրս http://www.humanrights.is/static/files/ltarefni/sigurdur_sigurjonsson_gegn_islandi.pdf (վերջին մուտք՝ 31.05.17),

² Տե՛ս, օրինակ, *Serif v. Greece*, no. 38178/97 գործով, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռ ար 14.12.1999 էլեկտրոնային ռեսուրս <http://www.refworld.org/cases/ECHR,3ae6b6f720.html> (վերջին մուտք՝ 31.05.17), *Hasan and Chaush v. Bulgaria* [GC], no. 30985/96 գործով, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռ ար 26.10.2000 էլեկտրոնային ռեսուրս <http://minorityrights.org/wp-content/uploads/old-site-downloads/download-382-Hasan-and-Chaush-v-Bulgaria.pdf> (վերջին մուտք՝ 31.05.17) և *Metropolitan Church of Bessarabia and Others v. Moldova*, no. 45701/99 գործով, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռ ար 13.12.2001 էլեկտրոնային ռեսուրս [http://hudoc.echr.coe.int/eng#{"appno":\["45701/99"\],"itemid":\["001-59985"\]}](http://hudoc.echr.coe.int/eng#{) (վերջին մուտք՝ 31.05.17):

տանի Հանրապետությունում ոչ առևտրային կազմակերպություններին վերաբերող «Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների զարգացման ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումները» վերտառությամբ հայեցակարգ սահմանում է, որ ոչ առևտրային կազմակերպությունները քաղաքացիական հասարակության կազմակերպություններ են՝ առանց նշելու, թե որն է քաղաքացիական հասարակությունը, և որոնք են դրան բնորոշ հատկանիշները¹: Ոչ առևտրային կազմակերպությունների օրենսդրորեն ամրագրված հատկանիշներն ու համապատասխան կազմակերպությունների կողմից գույքային հարաբերությունների մասնակցության վերաբերյալ մոտեցումներն ընդհանուր առմամբ արդի պահանջներին չեն համապատասխանում: Նման իրավիճակի հնարավոր պատճառ է այն, որ գիտական գրականության մեջ ի սկզբանե ոչ առևտրային կազմակերպությունների գործունեության իրավական ապահովմանն ուղղված քաղաքացիական իրավունքի նորմերի բնույթն ու բովանդակությունը սխալ են մեկնաբանվել: Դրան նպաստել են ոչ առևտրային կազմակերպությունների վերաբերյալ ձևավորված այն մոտեցումները, որոնց համաձայն՝ ոչ առևտրային կազմակերպություններին իրավաբանական անձ կարգավիճակը հարկավոր է բացառապես վերջիններիս գործունեության գույքային կողմն ապահովելու համար, այն պարագայում, երբ դրանք, լինելով քաղաքացիական հասարակության կազմակերպություններ, ունեն նաև այլ կարևոր հատկանիշներ:

Ոչ առևտրային կազմակերպությունները որպես իրավաբանական անձանց համակարգում գոյություն ունեցող ինքնուրույն խումբ որակելու հիմնական հատկանիշը հնարավոր է համարել դրանց ստեղծման նպատակը, այն է՝ հանրօգուտ գործունեության իրականացումը, սակայն ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման նպատակներն ամրագրված չեն գործող քաղաքացիական օրենսգրքում, որը, թերևս, միակ նորմատիվ-իրավական ակտն է, որը ոլորտը կարգավորում է ընդհանուր առմամբ:

Կատարված ուսումնասիրությունների և առկա գիտական ու գործնական մոտեցումների համադրությամբ՝ առևտրային կազմակերպությունների բնույթի և էության, ինչպես նաև դրանց նպատակների և գործունեության վերաբերյալ հնարավոր ենք համարում կատարել որոշ եզրահանգումներ, որոնց, ի թիվս այլոց, քննարկմանն ու բացահայտմանն են ուղղված լինելու մեր հետագա ուսումնասիրությունները:

Այսպես՝ առկա իրավաբանական գրականության և միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ոչ առևտրային կազմակերպությունների բնույթի ու էության վերաբերյալ միասնական մոտեցումներ չկան, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ գիտնականներն ու իրավակիրառները հակված են ոչ առևտրային կազմակերպությունները սահմանելիս կիրառել տարբեր չափանիշներ ու բնութագրիչներ, որոնցում քննարկվող կազմակերպությունների սահմանման բաղկացուցիչները տարբեր կերպ են ներկայացվում:

Ինչ վերաբերում է ՀՀ օրենսդրական դաշտում, մասնավորապես քաղաքացիական օրենսդրության մեջ առկա ոչ առևտրային կազմակերպություններին վերաբերող կարգավորումներին, ապա այս առումով նկատելի են էական բացթողումներ, որոնք հանգում են հետևյալին.

1. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով առևտրային են իրենց գործունեությամբ շահույթ ստանալու նպատակ հետապնդող

¹ Տե՛ս «Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների զարգացման ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումները» հայեցակարգ, էլեկտրոնային ռեսուրս. <http://moj.am/legal/view/article/614> (վերջին մուտք՝ 15.05.17):

կազմակերպությունները, իսկ ոչ առևտրային են իրենց գործունեությամբ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխող կազմակերպությունները: Այսինքն՝ ստացվում է մի իրավիճակ, որում ոչ առևտրային կազմակերպությունները բնութագրվում են բացառման սկզբունքի կիրառման եղանակով, որի պարագայում *ոչ առևտրային են այն կազմակերպությունները, որոնք առևտրային չեն*: Նման կարգավորումների պարագայում կարելի է պնդել, որ գործող քաղաքացիական օրենսդրության մեջ առկա իրավակարգավորումները չեն արտահայտում ոչ առևտրային կազմակերպությունների բնույթն ու բովանդակությունը և չեն պարունակում ոչ առևտրային կազմակերպությունների սահմանազատման հստակ չափանիշներ:

2. Ոչ առևտրային կազմակերպությունների վերաբերյալ իրավակարգավորումները պարունակում են էական հակասություններ, մասնավորապես՝ եթե ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ դրանք իրենց գործունեության նպատակով պետք է լինեն շահույթ չհետապնդող, ապա դրա 52-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերությամբ սահմանվում է, որ նման կազմակերպությունները կարող են զբաղվել իրենց կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան ձեռնարկատիրական գործունեությամբ, ուստի կարելի է եզրահանգել, որ ոչ առևտրային կազմակերպությունները, այնուամենայնիվ, իրենց գործունեության նպատակներով կարող են շահույթ ստանալու նպատակ հետապնդել, եթե նկատի ունենանք, որ ձեռնարկատիրական է այն գործունեությունը, որի նպատակը շահույթ ստանալն է: Ոչ առևտրային կազմակերպությունների համար շահույթ ստանալը չի կարող լինել ոչ թե *գործունեության*, այլ *ստեղծման նպատակ*:

3. «Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների զարգացման ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումների մասին» ՀՀ-ում շրջանառվող հայեցակարգը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ ոչ առևտրային կազմակերպությունները դիտվում են որպես քաղաքացիական հասարակության կազմակերպություններ, այսինքն՝ կազմակերպության ոչ առևտրային բնույթը նույնականացվում է քաղաքացիական հասարակության հետ, սակայն համապատասխան հայեցակարգը, դեմ գնալով իրավական որոշակիության հիմնարար սկզբունքի պահանջներին, չի սահմանում քաղաքացիական հասարակության հասկացությունը կամ դրան բնորոշ հատկանիշները, բացի այդ՝ կրկին չի սահմանվում, թե ինչ է ոչ առևտրային կազմակերպությունը:

Սեր կատարած մտահանգումներից երկրորդը վերաբերում է այն հանգամանքին, որ իրավաբանական գրականության մեջ և միջազգային փորձով ընդունված ոչ առևտրային կազմակերպությունների մի շարք հատկանիշներ, որոնք թույլ են տալիս միմյանցից տարբերակել կազմակերպությունների ոչ առևտրային ոլորտը, ՀՀ-ում ո՛չ նորմատիվ-իրավական և ո՛չ էլ տեսական գրականության մեջ ամրագրում չեն ստացել, ուստի անտեսվել են: Նման հատկանիշների թվին են դասվում, մասնավորապես, հետևյալները.

1. ոչ առևտրային կազմակերպությունների հարաբերական ինքնուրույնությունը, որը ենթադրում է պետական ապարատից հնարավորինս անկախություն: Այս չափանիշին ՀՀ-ում գործող ոչ առևտրային կազմակերպություններից չի բավարարում նոտարական պալատը¹:

¹ Տե՛ս Ավետիսյան Վ.Ղ. Կորպորատիվ իրավահարաբերությունների արդի հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում (տնտեսական ընկերությունների օրինակով), դոկտորական ատենախոսություն, Երևան, 2013, էջ 40:

2. Համապատասխան տիպի ոչ առևտրային կազմակերպություններին անդամակցության կամավոր բնույթը, որպիսի պահանջի դիտարկման պարագայում ՀՀ-ում ընդունված՝ ոչ առևտրային կազմակերպությունների մի մասը ենթակա է քննարկվող ոլորտից բացառման, ինչպիսին է, օրինակ, ՀՀ փաստաբանների պալատը¹:

ПРИЗНАКИ НЕКОММЕРЧЕСКИХ ЮРИДИЧЕСКИХ ЛИЦ

Геворк Погосян

Аспирант кафедры гражданского права ЕГУ

За годы исследований в юридической литературе не был сформирован единый подход к признакам, формирующим понятие некоммерческих организаций. Как следствие это привело к разногласиям и отсутствию как понятия, так и более полного представления о данной сфере общественных отношений.

Некоммерческие организации как инструменты гражданского общества призваны выполнять определенную роль в разных сферах жизнедеятельности индивидуума и общества в целом. Как правило, данные объединения полностью независимы от государства, а государство в сфере деятельности данных организаций играет лишь содействующую роль, создавая внешние факторы для становления и развития данных образований гражданского общества. Данный признак почти абсолютной бессвязности с государственным контролем определяется как один из наиболее явных признаков некоммерческого сектора.

По сути некоммерческие организации определяются не только целями деятельности, как это предписано действующим Гражданским кодексом РА, но и, в первую очередь, целями создания. И если цели деятельности данных организаций могут включать, среди прочего, и получение прибыли, то цели их создания совершенно не могут быть отождествлены с целями деятельности и не должны содержать фактор получения прибыли.

Еще одним из основных признаков некоммерческих организаций является запрет на распределение прибыли между ее участниками, либо членами. И если в случае получения прибыли как действующее гражданское законодательство РА, так и ученые – юристы расхожи во мнении допустимости данной деятельности, как неосновной цели деятельности некоммерческих юридических лиц, то в случае распределения любого материального и нематериального дохода мнения сходятся к тому, что такое распределение не допустимо.

Цель данной работы – наиболее полностью раскрыть основные признаки определяющие некоммерческий сектор и отделяющий его от коммерческих организаций, имея в виду, что данные юридические лица и правоотношения с их участием, ввиду их отличий и специфических черт, должны быть регламентированы по-разному.

¹ Տե՛ս նույն տեղում:

FEATURES OF NONPROFIT ORGANIZATIONS

Gevorg Poghosyan

PhD researcher at the YSU Chair of Civil Law

For years of researches in legal literature and in practice hasn't been created uniform approach to the features forming a concept of non-profit organizations. As a result it has led to disagreements and absence both a concept, and a better understanding about this sphere of the social relations.

Non-profit organizations as tools of civil society are urged to carry out a certain role in different spheres of activity of an individual and society - in general. Usually these associations are completely independent of the state, and the state in a field of activity of such organizations plays only the promoting role, creating external factors for formation and development of these institutes of civil society. This sign of almost absolute incoherence from the state control is considered as one of the most strong indications of non-commercial sector.

In fact, non-profit organizations are defined by not only the purposes of activity as it is offered in the existing civil code of RA, but also, first of all, by the creation purposes. And if the purposes of activity of certain organizations can include, among others, also gaining profit, then the purposes of their creation can't be identified with the purposes of activity at all and shouldn't contain a factor of receiving profit.

Another main feature of the non-profit organizations is the ban on distribution of profit among its participants, or members. Moreover, on the one hand there is convergence of opinions between the legislator and the lawyers in relation to the admissibility of receiving profit by non-profit organisations as not primary purpose of their activity. On the other hand, in case of distribution of any income the opinions are unit that such distribution isn't admissible.

The purpose of this work is to disclose most completely the main features defining non-commercial sector and separating it from the commercial organizations, meaning that these legal entities and legal relationship with their participation, due to their differences and specifics, must be regulated differently.

Բանալի բառեր – Ոչ առևտրային, իրավաբանական անձ, քաղաքացիական հասարակություն, հասկացություն, շահույթ, շահույթի բաշխում, մասնակից, անդամ, հատկանիշ, կազմակերպիչիրավական ձև, ոչ կառավարական, ոչ պետական, ստեղծման նպատակ, գործունեության նպատակ, հանրագուտ նպատակ, հանրային բարիք, շահույթ չհետապնդող, կամավորության սկզբունք, անդամակցություն

Ключевые слова: не коммерческий, юридические лица, гражданское общество, понятие, прибыль, распределение прибыли, участник организации, член организации, признак, организационно-правовая форма, неправительственный, не государственный, цели создания, цели деятельности, общественное благо, принцип добровольности членства

Key words: nonprofit, legal entity, civil society, concept, term, profit, distribution of profit, member of the company, participant of the company, character of nonprofit organization, nongovernmental, the purpose of foundation, the purpose of activity, social interest, principle of voluntary membership